ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՍՏԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ա. Վ. Մանուկյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Ա. Մ. Հարությունյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի մագիստրանտ, Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի հատուկ մանկավարժ

Հանգուցային բառեր և արտահայտություններ. լսողության խանգարում ունեցող նախադպրոցականներ, բժշկահոգեբանամանկավարժական գնահատում, գնահատման փաթեթ, զարգացման մակարդակի ցուցանիշներ:

Մանկավարժական գնահատման հիմնահարցերը բոլոր ժամանակներում էլ իրենց ուրույն տեղն են ունեցել, քանի որ դրանք կրթադաստիարակչական աշխատանքների հիմքն են կազմում: Հատուկ մանկավարժության ոլորտի առջև դրված ժամանակակից պահանջները նոր մարտահրավերներ են ներկայացնում մանկավարժական գնահատման գործընթացներին՝ դրանցում ավելի կարևորելով յուրաքանչյուր երեխայի գործառնության աստիճանը և զարգացման անհատական առանձնահատկություններն ու հնարավորությունները: Այն հանգամանքը, որ լսողության խանգարում ունեցող երեխաների մանկավարժական գնահատման գործընթացի ժամանակակից պահանջներն ու պայմանները բարեփոխումների կարիք ունեն, հիմնավորում է մեր կողմից իրականացված հետազոտության արդիականությունը:

Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնն առաջինն է հանրապետությունում և միակը: Հետևաբար մենք ուսումնասիրեցինք այդ կենտրոնում ներկայումս գործող գնահատման փաթեթներն ու գործիքները:

Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի գործունեության առարկան և հիմնական նպատակը երեխաների ֆիզիկական և մտավոր զարգացման առանձնահատկությունների բացահայտումն ու գնահատումն է: Այս կենտրոնը որոշում է երեխայի կրթական կարիքը: Այստեղ գնահատումն իրականացվում է 4 տարբեր փաթեթներով, որոնք նախատեսված են 3-5, 6-7, 8-10 և 11-14 տարեկան երեխաների գնահատման համար:

Թեստերը կազմված են ըստ հետև-

յալ հիմնական ոլորտների.

●Տարիքային տեղեկություններ:

●Տեսողական և լսողական ընկալման աստիճանը:

●Ժամանակի զգացողությունը:

●Տարածական ընկալման մակարդակը:

●Ուշադրության և հիշողության տեսակները:

●Կարդալու և գրելու կարողությունների մակարդակը:

●Մաթեմատիկական ունակությունների առկայությունը:

●Խաղային հմտությունների առկայությունը:

●Հաղորդակցման և հույզերի մակարդակը:

●Խոսքի զարգացման աստիճան:

●Շարժողական ոլորտի զարգացածության աստիճանը:

Տարիքային փաթեթներում ընդգրկված հետազոտման ոլորտներն ըստ տարիքի տարբեր են.

- 3-5 տարիքային փաթեթում բոլոր ոլորտներն առկա են,
- 6-7 տարիքային փաթեթում ևս բոլոր ոլորտները առկա են, սակայն ավելի բարդեցված են,
- 8-10 տարիքային փաթեթում բացակայում է տեսողական և լսողական ընկալման ոլորտը,
- 11-14 ում՝ բացակայում է տեսողական, լսողական ընկալման և խոսքի զարգացման ոլորտները:

Հոգեբանամանկավարժական գնահատման գործընթացում կարևոր է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունները: Հաստատված է, որ միևնույն աստիճանի լսողության կորուստ ունեցող երեխաների զարգացվածության մակարդակը կարող է լինել տարբեր մակարդակներում, իսկ լսողության խանգարումով երեխաների ախտորոշման առաջադրանքները կատարելու որակը մեծ մասամբ պայմանավորված է դրանց ներկայացման ձևից:

Կարևորելով գնահատման գործընթացը՝ հարկ ենք համարում նշել, որ երեխաների համընդհանուր մանկավարժական գնահատումն անհրաժեշտ է տվյալ երեխայի մասին առավել ամբողջական պատկերացում ստանալ, ինչպես նաև նրա անհատական առանձնահատկությունների և պոտենցյալ հնարավորությունների զարգացման մակարդակը որոշելու համար, քանի որ միայն այդ տվյալների հիման վրա է հնարավոր կառուցել հիմնավորված անհատական ուսումնական պլան:

Գործող <<Գնահատման փաթեթի>> արդյունավետությունը որոշելու նպատակով մենք <<Արաբկիր>> ԲՀ ԵԴԱՀ-ի վերականգնողական կենտրոնում կազմակերպեցինք լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների զարգացման մակարդակի գնահատում, որին մասնակցեցին 20 հետազոտվողներ: Երեխաներին ըստ ոլորտների տրվեցին առաջադրանքներ և արձանագրվեցին ստացված արդյունքները (նկար 1):



Նկար 1. Հետազոտվողների զարգացման մակարդակի միջին ցուցանիշներն ըստ գործող <<Գնահատման փաթեթի>>:

Նկար 1-ում պարզ երևում է, որ մասնագետների օգնությունը կազմում է 44,11%, քանի որ հետազոտվողների 17,1%-ը դժվարանում էր ինքնուրույն ընկալել և հասկանալ առաջադրանքները: Երբ օգնության էր գալիս մասնագետը և ավելի պարզեցնում հարցը, ապա երեխաները հեշտությամբ էին կատարում առաջադրանքը: Սակայն հետազոտվողների 38,79%-ը այդպես էլ չկարողացան կատարել առաջադրանքները:

Վերլուծելով ներկայումս գործող մանկավարժական <<Գնահատման փաթեթի>> թեստերը՝ մենք բացահայտեցինք մի շարք դժվարություններ, որոնք ունենում են լսողության խանգարում ունեցող նախադպրոցականները, ինչը հիմնականում պայմանավորված է այդ երեխաների զարգացման գործընթացի առանձնահատկություններով.

- որոշ առաջադրանքներ նրանք չէին կարողանում կատարել հարցը չհասկանալու պատճառով,
- որոշ առաջադրանքներ երեխաները չէին կարողանում կատարել դիդակտիկ նյութերի բացակայության պատճառով,
- չէին կարողանում իրենց ուղղված հարցերից շատերին պատասխանել,
- դժվարանում էին ձևակերպել սեփական մտքերը,
- սահմանափակ բառապաշարի պատճառով չեն հասկանում որոշ բառերի նշանակությունը, իմաստը:

Հաշվիառնելովբոլորդժվարությունները, որոնք ունենում են լսողության խանգարում ունեցող նախադպրոցականները, Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման փաթեթի հիման վրա, ինչպես նաև մասնագետների և ծնողների դրական և բացասական կարծիքները, մեր կողմից մշակվեց հատուկ <<Գնահատման փաթեթ>>՝ նախատեսված լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների համար:

Գնահատման թեստերը մշակվել են Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնում գործող <<Գնահատման փաթեթների>>, հատուկ գիտամեթոդական

գրականության, լսողության խանգարում ունեցող երեխաների զարգացման առանձնահատկությունների, տվյալ խնդրի շուրջ ծավալվող մեր հետազոտությունների արդյունքների ուսումնասիրման և վերլուծության հիման վրա:

Թեստերում փոփոխվեցին հարցադրումները, ավելի պարզեցվեցին առաջադրանքները, ավելացվեցին դիդակտիկ պարագաները, և որոշ ոլորտներ ընդհանրապես հանվեցին, օրինակ՝ ինքնագնահատականը, քանի որ լսողության խանգարում ունեցող նախադպրոցականները սովորաբար այդ տարիքում ունենում են ցածր ինքնագնահատական:

Թեստերը կազմվեցին ըստ հետևյալ հիմնական ոլորտների.

Տարիքային տեղեկություններ

1. Ի՞նչ է քո անունը, ազգանունը:

2 .Դու քա՞նի տարեկան ես:

3. Ո՞ւմ հետ ես ապրում:

4. Ի՞նչ ընտանի և ի՞նչ վայրի կենդանիներ գիտես (ցույց տալ նկարներ):

5. Առանձնացրո՛ւ մրգերը և բանջարեղենները (առաջարկվում են 3 մրգի և 3 բանջարեղենի նկարներ):

Խոսքային կարողություններ

6. Ծափերի միջոցով վանկատի՛ր հետևյալ բառերը (շուն, դպրոց, պայուսակ):

7. Կրկնի՛ր իմ հետևից. ՊՏԿ, ՄՆ, ՓԹՔ, ՍՇ, ՏԿԽ, ՖՓՎ:

8.Անվանի՛ր այն նկարները, որոնցում կա Պ (կամ Մ) հնչյունը (առաջարկվում են առարկայական նկարներ):

9. Այդ բառերը գործածի՛ր նախադասությունների մեջ:

Ուշադրության և հիշողության տեսակները

10. Նկարում գտի՛ր երեք տարբերություն (առաջարկվում են համապատասխան նկարներ):

11. Կրկնի՛ր բառերը, որոնք կհիշես (5 բառ):

12. Ո՞րն է ավելորդը (առաջարկվում են թեմատիկ նկարներ):

13.Ո՞ր նկարը չկա (5 նկարի սահմանում):

Մտածողության տեսակները

14. Նկարում ինչ՞ է սխալ (ցույց տալ անհեթեթ նկարներ):

15. Ի՞նչ է պատկերված (ցույց տալ աղմկապատված նկարներ)

Ժամանակի ընկալման կարողության մակարդակը

16. Որո՞նք են տարվա 4 եղանակները (ցույց տալ տարվա չորս եղանակները պատկերող նկարներ) :

17. Ասա՛ տարվա 12 ամիսները:

18. Ասա՛ շաբաթվա օրերը:

Տարածական ընկալման մակարդակը

19. Տվյալ պատկերներից որի՞ն է նման արևը (ըստ նկարի):

Իմաստային ընկալման մակարդակը

20. Ինչի՞ համար է գիրքը, սոսինձը, գրիչը:

21. Քամին լինում է տա՞ք, թե բարի:

Լսողական ընկալման մակարդակը

22. Լսի՛ր թմբուկի հարվածները և կրկնի՛ր դրանք (բացառելով տեսողությունը):

23. Լսի՛ր և որոշի՛ր երաժշտական գործիքների ձայնը (տարբերակել թմբուկ, դափ, շվի, մետաղաֆոն, ակորդեոնի հնչողողությունը):

24. Ցո՛ւյց տուր հանձնարարված գույնը (տալ տարբեր գույնի մատիտներ):

25. Լսի՛ր և ցույց տուր (երեխային առաջարկվում են գործողություն ցույց տվող նկարներ, այնուհետև միայն լսողությանմբ նա պետք է տարբերակի նկարները):

Կապակցված խոսք կառուցելու կարողության աստիճանը

26. Պատմի՛ր, թե ի՞նչ ես տեսնում նկարում (երեխային ներկայացվում է սյուժետային նկար):

Տեսողական ընկալում

27. Լրացրու՛ բաց թողնված մասնիկը (օրինակ՝ նապաստակի ականջը, աստղի մի մասը, անձրևանոցի պոչը, ծաղկամանի մի մասը):

Կարդալ - գրելու ունակությունները

28. Ընդգծի՛ր Ա և Ի տառերի տակ (Ո Ն Ա Յ Ի Ո Գ Հ Յ ՈՒ Ա Մ Ի Ո Կ Ի Բ Ո Մ Ա Ի):

29. Գրի՛ր անունդ:

Մաթեմատիկական ունակությունների առկայությունը

30. Այս չորս մատիտները հավասար բաժանիր իմ և քո միջև:

31. Երեքը տուր ինձ, քանի՞սը քեզ մնաց:

32. Մինչև քանի՞սը կարող ես հաշվել:

Խաղային կարողությունների մակարդակը

33. Պատմի՛ր քո սիրած խաղի մասին:

Հաղորդակցման և հույզերի մակարդակը

34. Երբ խաղում չես հաղթում, շա՞տ ես տխրում:

35. Երբ մայրիկը չի թողնում բակ գնալ, նեղանու՞մ ես մայրիկից:

36.Երբ բակում քեզ հետ չեն խաղում, տխրու՞մ ես:

Մանր և խոշոր շարժումներ

37. Նկարի՛ր աղջիկ (տղա):

38. Գունավոր թղթերը կտրտիր մանր մասերի:

39. Կտրած գունավոր թղթերով պատրաստի՛ր խճանակար:

40. Ցատկի՛ր հինգ անգամ:

41. Պարանով ցատկի՛ր որքան կարող ես:

Մշակված նոր <<Գնահատման փաթեթով>> մենք իրականացրինք մանկավարժական գնահատում, որին մասնակցեց 20 լսողության խանգարում ունեցող նախադպրոցական: Այն իրականացվեց <<Արաբկիր>> ԲՀ ԵԴԱՀ-ի լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների վերականգնողական կենտրոնում անհատական տարբերակով, առանց ծնողի և աշխատող մասնագետի ներկայության: Յուրաքանչյուր երեխայի գնահատումը տևեց 3-5 օր՝ պայմանավորված երեխայի անհատական առանձնահատկություններով: Երեխաներին տրվեցին մեր կողմից մշակված հարցեր և առաջադրանքներ, ստացված արդյունքները արձանագրվել, ամփոփվել և ներկայացվել են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների զարգացման մակարդակի ցուցանիշները

Առաջադրանքներ	Լսուղության խանգարում ունեցող երեխաներ N=20					
	Ինքնուրույն		Մասն. օգնութ.		Չեն պատասխ.	
	թիվ	%	թիվ	%	թիվ	%
1. Քո անուն ազգանունը:	8	40%	12	60%	0	-
2. Դու քանի՞ տարեկան ես:	20	100%	0	0%	0	-
3.Ո՞ւմ հետ ես դու ապրում:	12	60%	8	40%	0	-
4. Առանձնացրու՛ մրգերը և բանջարեղենները:	14	70%	6	30%	0	-
5. Ի՞նչ ընտանի և վայրի կենդանիներ գիտես:	8	40%	10	50%	2	10%
6. Վանկատի՛ր տրված բառերը ծափերի միջոցով:	7	35%	6	30%	7	35%
7.Կրկնի՛ր իմ հետևից. ՊՏԿ, ՄՆ, ՓԹՔ:	18	90%	2	10%	0	-
8. Անվանի՛ր այն առարկաների նկարները, որոնց մեջ լսում են Պ հնչյունը:	8	40%	12	60%	0	-
9.Այդ բառերը գործածի՛ր նախադասությունների մեջ:	2	10%	8	40%	10	50%
10. Նկարում գտի՛ր 3 տարբերություն:	5	25%	10	50%	5	25%
11.Կրկնի՛ր այն բառերը, որոնք կհիշես:	7	35%	7	35%	6	30%
12.Որոշի՛ր ավելորդը:	18	90%	2	10%	0	-
13. Ո՞ր նկարը չկա:	4	20%	7	35%	9	45%
14.Ի՞նչն է նկարում սխալ:	6	35%	8	40%	6	30%
15. Ի՞նչ է պատկերված:	7	35%	8	40%	5	25%
16. Ասա՛ տարվա 4 եղանակները:	8	40%	8	40%	4	20%
17. Ասա՛ տարվա 12 ամիսները:	5	25%	10	50%	5	25%
18. Ասա՛ շաբաթվա օրերը:	5	25%	8	40%	7	35%
19. Պատկերներից որի՞ն է նման արևը:	20	100%	0	-	0	-
20. Ինչի՞ համար են սոսինձը, գրիչը, մկրատը:	14	70%	6	30%	0	-
21. Քամին լինում է տա՞ք, թե՞ բարի:	12	60%	8	40%	0	-
22. Լսի՛ր թմբուկի հարվածները:	5	25%	8	40%	7	35%
23 . Լսի՛ր և որոշի՛ր երաժշտական գործիքների ձայնը:	0	-	8	40%	12	60%
24. Ցու՛յց տուր հանձնարարված գույնը:	6	30%	14	70%	0	-
25.Լսի՛ր և ցու՛յց տուր:	6	30%	8	40%	6	30%
26.Պատմի՛ր, թե ի՞նչ ես տեսնում նկարում:	4	20%	6	30%	10	50%
27. Լրացրու՛ բաց թողնված մասնիկը:	16	80%	4	20%	0	-
28. Ընդգծի՛ր Ա և Ի տառերի տակ:	2	10%	12	60%	6	30%
29. Գրիր՛ անունդ:	0	-	8	40%	12	60%
30.Մատիտները հավասար բաժանիր իմ և քո միջև:	4	20%	12	60%	4	20%
31. Երեքը տուր ինձ, քանի՞սը մնաց քեզ:	10	50%	10	50%	0	-
32.Մինչև քանի՞սը կարող ես հաշվել:	15	75%	5	25%	0	-
33. Պատմի՛ր քո սիրած խաղի մասին:	4	20%	7	35%	9	45%
34.Եթե խաղում չես հաղթում, շա՞տ ես տխրում:	4	20%	10	50%	6	30%
35. Երբ մայրիկդ չի թողնում բակ գնալ, նեղանու՞մ ես մայրիկից:	10	50%	10	50%	0	-
36.Երբ բակում քեզ հետ չեն խաղում, ի՞նչ ես անում:	12	60%	8	40%	0	-
37. Նկարի՛ր աղջիկ:	4	20%	10	50%	6	30%
38. Գունավոր թղթերը կտրտի՛ր մանր մասերի:	3	15%	10	50%	7	35%
39. Եկ միասին խճանկար պատրաստենք:	4	20%	7	35%	9	45%
40. Ցատկի՛ր հինգ անգամ:	4	20%	16	80%	0	-
41. Պարանով ցատկիր որքան կարող ես:	2	10%	0	-	18	90%
Ընդամենը		39.51%		38.79%		21.7%

Աղյուսակ 1-ում պարզ երևում է, որ ինքնուրույն պատասխանների և մասնագետի օգնությամբ ստացված միջին ցուցանիշները համարյա հավասար են՝ 39.51% և 38.79%, իսկ անպատասխան հարցերի ցուցանիշները՝ 21.7%:

Մենք համեմատեցինք ստացված արդյունքները՝ առկա գործող գնահատման փաթեթի և մեր կողմից առաջարկված գնահատման թեստերի գնահատման ցուցանիշների հետ: Արդյունքը ներկայացված է գծապատկեր 2-ում:



Նկար 2. Հետազոտվողների զարգացման մակարդակի միջին ցուցանիշների համեմատական վերլուծությունն ըստ գործող և նոր մշակված <<Գնահատման թեստերի>>

Գծապատկեր 2-ից ակնհայտորեն երևում է, որ 22,41%-ով ավելացավ հետազոտվողների ինքնուրույն պատասխանների թիվը, 5,32%-ով նվազեց մասնագետի միջամտությունը, և 17.09%-ով նվազեց անպատասխան հարցերի թիվը:

Այսպիսով՝ ստացված արդյունքները լիարժեքորեն վկայում են մեր կողմից մշակված և կիրառված <<Գնահատման թեստերում>> հատուկ միջոցների և մեթոդների արդյունավետության մասին, որը նպաստում է լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների զարգացման մակարդակի լիարժեք բացահայտմանը և գնահատմանը, հիմք է ծառայում կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպմանը:

РЕЗЮМЕ

ОБОСНОВАНИЕ ЭФФЕКТИВНОСТИ ТЕСТИРОВАНИЯ УРОВНЯ РАЗВИТИЯ ДЕТЕЙ ДОШКОЛЬНОГО ВОЗРАСТА С НАРУШЕНИЕМ СЛУХА

Манукян А. В.

доцент кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук

Арутюнян А. М

магистрант кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, специальный педагог Медико-психолого-педагогического центра оценивания

В статье на основе анализа результатов исследований представлена эффективность разработанных тестов для определения уровня развития детей дошкольного возраста с нарушением слуха.

SUMMARY

RATIONALE OF EFFICIENCY OF TESTING THE LEVEL OF DEVELOPMENT PRESCHOOL CHILDREN WITH HEARING IMPAIRMENT

Manukyan A. V.

associate professor at the Chair of Special Pedagogy and Psychology, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Candidate of Pedagogical Sciences

Harutyunyan A. M.

master student at the Chair of Special Pedagogy and Psychology, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, Medical –psychological –pedagogical assessment center of Yerevan special pedagogue

The article presents the result of the research of the analysis, shows the effectiveness of the developed tests to determine the level of development of preschool children with hearing impairment.